ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ջանֆիդա, 1 փող. 48/1, Հեռ. (093) 644006 , janfida.armavir@mta.gov.am

N 280

13 հոկտեմբեր 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ի լրումն Ջանֆիդա համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 03-ի թիվ 247 գրության, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանության համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 62-Ն, որոշման փոփոխված օրինակը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

Կապր.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՆՖԻԴԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջանֆիդա, (093) 644006, janfida.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 80-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի բնակիչ Բաբկեն Հակոբի Գրիգորյանի դիմումը Արմավիրի մարզի Ջանֆիդա համայնքի 19 փողոցթիվ 29 հասցեում տնամերձ հողամասի վրա գտնվող ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ: Հիմք ընդունելով կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 . Ճանաչել օրինական՝ քաղաքացի Բաբկեն Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի գյուղ Ջանֆիդա 19 փողոց 29 հասցեում գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տուն 145.2 քմ. կառուցված 1992 թվ. , աստիճաններ 12.0 քմ. կառ. 1992 թ., բնակելի տուն 50.2 քմ. կառ. 1992 թ., անասնաշենք 38.0 քմ. կառ. 1992 թ., ինքնակամ օժանդակ շինություն ծածկ 36.5 քմ. կառուցված 2005 թ., ծածկ 29.8 քմ. կառ. 2005 թ.:

2 . ՈՒժը կորցրած ճանաչել Ջանֆիդա համայնքի ղեկավարի 10.08.2020 թվականի թիվ 62-Ա որոշումը:

3 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՍԱՐ ՂՈՐՂԱՆՅԱՆ

2020 թ.
հոկտեմբերի 13

գ.Ջանֆիդա